տեսնել, կարող էին գնալ, միայն պէտք է գիշերը չմնան նրանց մօտ, այլ շուտով վերադառնան. իսկ ինքը առաւօտեան պատարագից յետոյ կը գայ Խաթունին եւ Հասօի նշանածին տեսնելու: Եւ աւելցրուց, թէ ինքը միշտ գոհ է եղել ծերունի որսորդից, եւ համարում է որսորդին շատ բարի մարդ. եւ նա փոքր — ինչ հանգիստ էր իմ մասին նրանով միայն, որ գիտէր, թէ ես գտնւում եմ որսորդի տանը:

— Դու որտեղի՞ց գիտէիր, մայրիկ:

— Ինքը որսորդը մարդ էր ուղարկել ինձ մօտ, քո մասին իմացում տալու:

— Եւ դու գիտե՞ս, թէ ինչպէս յայտնոեցայ ես այնտեղ:

— Կարօն քեզ տարաւ: Ես բոլորը գիտեմ...

Վերջին խօսքը արտասանելու միջոցին մօրս ձայնը դողաց: Չգիտեմ ինչո՞ւ Կարօյի անունը նրան վրդովմունք պատճառեց:

— Կարօն շատ լաւ տղայ է, մայրիկ:

— Լաւ է, բայց... Թող մնայ, ես յետոյ կը խօսեմ նրա մասին...

— Յայտնոեցա՛ւ փախստականը, — լսելի եղաւ քեռի Պետրոսի որոտացող ձայնը, որ նոյն միջոցին ներս մտաւ մօրս վրանը, ուր նստած էինք մենք:

Ես կանգնեցայ, եւ պահպանելով այն ժամանակի քաղաքավարութեան ձեւը, համբուրեցի քեռուս ձեռքը: Նա համբուրեց իմ ճակատը եւ նստեցրուց իր մօտ:

Քեռի Պետրոսը գտնւում էր իր հոգու խիստ ուրախ տրամադրութեան մէջ. ինձ երեւաց, որ նա փոքր-ինչ հարբած էր: Նա տարել էր իր գերդաստանը ման ածելու եւ դառնում էր զբօսանքից: Նա դարձաւ դէպի ինձ այսպիսի անկապ խօսքերով.

— Ի՞նչ ես շինում դու, լաւ՞ ես, ի՞նչ է անում հին աղոէսը... մարդիկ այստեղ հոգու համար են գործում, իսկ «նա» այնտեղ եզիդիների իշխանի մօտ, աստուած ոչ գիտէ, ի՞նչ սատանայական որոգայթներ է լարում... եւ իր «ճտերին» երկրի զանազն կողմերն է ուղարկում... Ինչի՞ համար, ի՞նչ դուրս կը գայ այս յիմարութիւններից... Եւ դու, քամի փչող ընկեր, լաւ՛ տեղն ընկար, ինչպէս մուկը մկնորսակի մէջ...

Ինձ պարզ հասկանալի էր, թէ քեռի Պետրոսի հեգնական ակնարկութիւններն ումն էին վերաբերում: Նա խօսում էր որսորդ Աւօյի եւ նրա հիւրերի՝ իմ ընկերների մասին: Բայց որտեղի՞ց գիտէր նա, թէ որսորդը կամ նրա խօսքով՝ «հին աղոէսը» գնացել էր եզիդիների իշխանի մօտ. այդ մի գաղտ-